թաւոր գոյգ խաչեր։ Իսկ բուն կոթողի երկու երեսին ոլորապտոյտ որթի վերայ ողկոյզի եւ տերեւի փոխէփոխ շարք։ Կոթողը կէսից վեր կոտրուած է։ Մենք նկարագրել ենք այս



Պատկ. 95

վայրի հնագիտական արժէքը իր երկու ե-կեղեցիներով, որոնց մօտ է եւ այս կոթողը։ Եր. 30։

Ամբողջապէս անաղարտ, միայն առանց պատուանդանի մեր ձեռքն է հասել գերեզ-

մանական մի յուշարձան, որ այժմ գտնւում է Էջմիածնի Թանգարանում եւ բերուած է Սենեքերիմ Տէր Յակոբեանի ձեռքով Արագածի հարաւային ստորոտի Ուջան գիւղից ոչ հեռու, Թարթարամանք կոչուած վայրից։ Ուջանը կամ պատմական անունով Վժանը, մէկն է այդ շրջանի յայտնի վայրերից, Ագ-ցի, Կուաշի, Աւանի եւ Արուճի հետ բազմա-թիւ հին յիշատակներով եւ բազիլիկ եկե-